

Հ Ր Ա Մ Ա Ն N 311-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«03» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԱԼԵՔ ԱՎԵՏՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ՍԱՄՎԵԼ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հունիսի 30-ի N ԵՆՊ-398/18 գրությունը և «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Ա. Ավետյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. 2018 թվականի հուլիսի 16-27-ը ներառյալ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Վաղարշապատ նոտար Ալեք Ավետյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Վաղարշապատ նոտար Սամվել Ղարիբյանին:

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

 Invalid signature

X 

Artak Zeynalyan